Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՑ-2 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան - 2 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված**

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
15:37:00 AMST

**գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 51 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 11 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ արտթերապիայի, մանր և խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող վարժությունների, նեյրոբիկ վարժությունների, դեբրիֆինգի մեթոդի կիրառման, վիզուալիզացիայի, ինտելեկտուալ վարժությունների կապերի ընդլայնման, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 10 խմբակ՝
  - Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ,
  - Կինեզոլոգիա-2,
  - Հմուտ ձեռքեր -2,
  - Երգ,
  - Պար,
  - Խոհարարական,
  - Տիկնիկագործություն,
  - Առողջապահական -2,
  - Գրական,
  - Քննարկումների ակումբ,

  Խմբակներին մասնակցել է 51 շահառու:
  Կազմակերպվել է թվով 44 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 51 շահառու: Իրականացված միջոցառումներն են.
  - Նվիրված «Սուրբ Հարության» տոնին - 2,
  - Էքսկուրսիա՝ Կենդանաբանական այգի,
  - Մայիսյան տոներ,
  - Ծննդյան օրերի նշում -2,
  - Էքսկուրսիա՝ Պ.Սեվակի տուն-թանգարան, Նորավանք,
  - «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության փառատոն:
  - «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության փառատոն:
  - Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, «Գիշերային փոքրիկ սերենադ»:
  - «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության փառատոն, «Զինված մարդը»:
  - Ա.Բաբաջանյան համերգասրահ, Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախումբ:
  - Ա.Բաբաջանյան համերգասրահ, Հայկ Պետրոսյանի մենահամերգ:
  - Ա.Բաբաջանյան համերգասրահ, Մտավորականը՝ Վլադիլեն Բալյան:
  - «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, համերգ՝ նվիրված Պետրոս Հայկազյանի 100-ամյակին:
  - «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ֆրանկաֆոնիայի միջազգային օրերի փակման գալա համերգ:

- Ա.Բաբաջանյան համերգասրահ,Հայաստանի ակունք ազգագրական համույթ, Հայկական երաժշտության ակունքներում:
- Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, անգլիական ազգային բալետ, Ակրամ Խան «Ժիզել» բալետ-2:
- «Առնո Բաբաջանյան» համերգասրահ, Ռոբերտ Շուման, «Հրաշալի մայիս ամսին…» վոկալ կամերային երաժշտություն:
- Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, «Գարուն ա», Երեվանի պետական կամերային երգչախումբ:
- Ա.Բաբաջանյան համերգասրահ,Հայաստանի ազգային նվագարաններ պետական նվագախմբի համերգ-2:
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Կանդինսկու անվան սիմֆոնիկ նվագախմբի համերգ:
- Ա.Բաբաջանյան համերգասրահ, Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ, համերգ նվիրված Վլադիլեն Բալյանի 100-ամյակին:
- Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, բարոկ եւ դասական երաժշտության երեկո, հնագույն երաժշտության «Տաղարան» համույթ:
- Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, …Ով երգում է հայերեն… նվիրված Թովմաս Պողոսյանի 70-ամյակին:
- Թումանյանի անվան այգի, Երեվան բալետ ֆեստ, Սանկտ Պետերբուրգի Բորիս Էյֆմանի ակադեմիական բալետի ներկայացումը-2:
- Թումանյանի անվան այգի, Երեվան բալետ ֆեստ, Ա.Սպենդիարյանի անվան ազգային թատրոն, «Կարապի լիճը» բալետը-2 :
- Թումանյանի անվան այգի, Երեվան բալետ ֆեստ, Թբլիսիի ազգային բալետի ներկայացումը-2:
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ա.Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային հոբելյանական մրցույթի բացման համերգը:
- Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության մշակույթի կենտրոնի Ջիվանու անվան աշուղական դպրոցի Սարգիս Խաչատրյանի դասարանի սաները ներկայացնում են «Հայրենիքիս ջուրը» խորագրով համերգ – երեկո:
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Երեվան «Պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի համերգը»:
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Ա.Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային մրցույթի պարգեվատրման արարողությունը եւ գալա համերգը:
- Երեվանի Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն, «Վերջին ծաղրածուն» ներկայացումը:
- Երեվանի Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն, «Անվերջ վերադարձ» ներկայացումը, նվիրվում է Պարույր Սեվակին:
- Երեվանի Հենրիկ Մալյանի անվան թատրոն, «Ատամնաբույժն արեվելյան» ներկայացումը:
- Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային թատրոն, «Սանկտ Պետերբուրգի պալատներ» միջազգային երաժշտության փառատոնը Երեվանում, նշանավոր ձայներ համերգը նվիրված էր Ֆեոդոր Շալյապինին:
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, «Օպերայի ուրվականը» համերգը:
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Սանկտ Պետերբուրգի պալատներ միջազգային փառատոնի հաղթողների գալա համերգը-2:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 12 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 27) ուղղված հույզերի բացահայտմանը գույների միջոցով, շարժումների կոորդինացիային, տեսատարածական ընկալմանը, մանր շարժողականությանն ու ուշադրության կենտրոնացմանը: Մասնակիցները զբաղվել են կավաթերապիայով, մանդալաթերապիայով:

- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 1 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.
- Նվիրված «Սուրբ Հարության», (տե՛ս հետևյալ հղմամբ՝
- Էքսկուրսիա՝ Կենդանաբանական այգի, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/photo/?fbid=861093019387868&set=pcb.861093286054508),
- Մայիսյան տոներ, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1613758709409511),
- Ծննդյան օրերի նշում, (տե՛ս հետևյալ հղմամբ
- Էքսկուրսիա՝ Պ.Սեվակի տուն-թանգարան, Նորավանք, (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/1110852203314206),
- Խոհարարական խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1166077364804365),
- Կինեզոլոգիա (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/1836069733492811),
- Երգ (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/1513590936041337),
- Հոգեբանի անկյուն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/photo/?fbid=391910760203702&set=pcb.391911036870341):
- Հմուտ ձեռքեր (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/photo?fbid=832386858925151&set=pcb.832387102258460&locale=hy_AM),

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար.

- Շենգավիթի ցերեկային կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կողմից «Նոռենի» սոցիալական տանը կազմակերպած դասընթացին՝ «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով:
- Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա թիմերի պատասխանատու սոցիալական աշխատողը մասնակցել է տարեցների պաշտպանության ցանցի անդամ կառույցների ներկայացուցիչների՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից նախաձեռնած մեկօրյա վերապատրաստմանը, փորձի փոխանակմանը: Վերապատրաստումն անցկացրել է փորձագետ, որը տիրապետում է մի շարք երկրներում տարեցների խնամքի և աջակցման կենտրոնների հիմնադրման և գործարկման աջակցման փորձին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 52/51 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 34 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 3 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 3 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 48 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 52 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 44 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 27 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 51 |
| 5.1 | Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ | 14 |
| 5.2 | Կինեզոլոգիա - 2 | 28 |
| 5.3 | Հմուտ ձեռքեր - 2 | 27 |
| 5.4 | Երգ | 18 |
| 5.5 | Պար | 13 |
| 5.6 | Խոհարարական | 12 |
| 5.7 | Տիկնիկագործություն | 12 |
| 5.8 | Առողջապահական -2 | 24 |
| 5.9 | Գրական | 12 |
| 5.10 | Քննարկումների ակումբ | 6 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 51 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 24 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Անհատական հոգեբանական խորհրդատվություն | 25 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «08» 07.2024թ
(ստորագրություն, անուն,ազգանուն)